# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

## ՄԵԾ ՏՕՆԸ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

### Վ Լ Ա Դ Ի Կ Ա Ւ Կ Ա Զ

Համազգային մեծ տօնը այստեղ կատարեց չտեսնուած ոգևորութեամբ. ականատեսների ասելով վերջին 18—20 տարուայ ընթացքում այդպիսի հոծ բազմութեամբ չէր հաւաքուել տեղիս հայ հասարակութիւնը։ Դեռ ուրբաթ երեկոյեանից նկատելի էր հետաքրքրութիւնը. ոմանք հաւաքուել էին եկեղեցի նախատօնակին։ Շաբաթ առաւօտ ծխ. դպրոցի և այլ դպրոցների հայ աշակերտների ու բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ կատարեց հոգեհանգիստ հայ գրի ու տպագրութեան վաստակաւորների յիշատակին։ Ուս. պ. Ալլահվերդեանը խօսեց այդ խոշոր երևոյթների նշանակութեան մասին հայ կեանքում։ Աւելի հանգամանօրէն կարդաց երկու տօների մասին գիմնազիայի վերջին դասարանի աշակերտներից մէկը (ռուսերէն)։

Կիրակի առաւօտ հասարակութիւնը լցրել էր եկեղեցին. կային և օտարներ։ Խօսեց Ց. Ք. Սառիկեանը։ Կատարեց մաղթանք։ Ժամերգութիւնից յետոյ հանդիսաւոր թափօրը՝ ամպհովանու տակ բռնած ս. Մեսրոպի հոյակապ պատկերը՝ ուղղուեց դէպի դպրոց, որը զարդարուած էր յոբելենական մակագրութիւններ կրող դրօշակներով և կանաչով, դպրոցի շուրջը ցանուած էին թարմ ճիւղեր. շէնքի ճակատին երևում էին ս. Սահակի և ս. Մեսրոպի պատկերները, որոնց մէջ տեղ խոշոր տառերով գրուած էր «Համազգային Մեծ Տօնը»։ Դպրոցի ներսը նոյնպէս պատշաճ կահաւորուած էր դրօշակներով, ծաղկատառերով, թափանցիկ մակագրութիւններով և այլն. մի սենեակ ներկայացնում էր հայ գործիչների պատկերասրահը. նոյն տեղում ցուցադրուած էին հայ մամուլը, հին ձեռագրեր, հայ պատմութեան ու հայագիտութեան վերաբերեալ գրքեր և յոբել. հրատարակութիւններ։

Մի ուրիշ սենեակում շինուած էին արևելեան և այլ քիոսկներ, ուր տեղ զգեստաւորուած մշեցին, ղարաբաղցի ու ախալցխացի հայուհիները վաճառում էին սրբերի պատկերները, յոբել. բացիկներ, ծրագիրներ և գրքեր։ Ծրագրային բաժինը ամբողջապէս վերցրած էր հայ հեղինակների գրի և ուսման վերաբերեալ №№-ից և ժող. երգերից։ Բանախօսեց ուս. Դուրգարեան։ Վերջում ցոյց տուեցին կենդանի պատկերներ՝ «Տառերի գիւտը» և «Սահակ-Մեսրոպեան դպրոց», որոնք քանիցս կրկնեցին։ Քաղաքագլուխ Բաեր քաղ. վարչութեան կողմից ջերմ շնորհաւորանք ուղղեց։

Հանդէսի տպաւորութիւնը փոխացուցիչ էր. հասարակութեան տրամադրութիւնը արտակարգ բարձր. նոյն իսկ փոքրիկ արտասանողները շփոթւում ու յուզւում էին այս արտակարգ ոգևորութիւնից։

Հայ կեանքից կտրուած համայնքը կարծես զգում էր իր դատապարտելի անփութութիւնը դէպի մայրենի դպրոցն ու գրականութիւնը և կարծես իր զղջումն էր բերում այս եզակի ու պանծալի տօնին այն խնկելի անուններին, որոնք պատկառանքով էին շշնջում այդ օրերը հայ շրթունքները և որոնք կան ու կը մնան անսասան քանի դեռ իւրաքանչիւրի համար անհրաժեշտ է մայրենի խօսքը, մայրենի գիրն ու գրականութիւնը։

Մ. Դուրգարեան

—

### Ա Խ Ա Լ Ք Ա Լ Ա Ք

Ամսիս 12-ին, շաբաթ առաւօտեան զանգակների ղօղանջիւնի հետ հաւաքուեց ժողովուրդը, բերուեցին համքարական դրօշակները և պաշտօնական անձերի, զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչների և աշակերտութեան ներկայութեամբ մատուցեց պատարագ, օծուեցին ս. Սահակի և ս. Մեսրովբի ձիթաներկ պատկերները, ապա կատարեց հոգեհանգիստ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին։

Պատարագի ժամանակ խօսեց Համազասպ քահ. Տէր-Գրիգորեան։ Հոգեհանգստից յետոյ հոգևորականութիւնը հանդիսաւոր թափօրով գնաց ծխ. դպրոցի նոր շէնքը, որի արևելեան և արևմտեան կողմերում կատարեց անդաստան. այստեղ բանախօսեցին՝ դպր. աւագ ուսուցիչ պ. Կար. Ամատունի՝ Կ. Հ. Բ. Ընկ. Ախալքալաքի ճիւղի կողմից պ. Վարդ. Այվազեան, համքարների կողմից պ. Արշ. Տէր-Յակոբեան։ Ապա տեղի ունեցաւ ճաշ՝ հրաւիրուած հիւրերի և ժողովրդի մասնակցութեամբ։ Ճաշի ժամանակ խմեցին Թագաւոր Կայսեր, Կաթողիկոսի, Փոխարքայի, Նահանգապետի և առաջնորդի կենացները, որոնց և ուղարկեց հեռագիրներ։ Ճաշին մասնակցում էին մօտ 100 անձինք, հասարակութեան բոլոր խաւերից։ Նկատելի էր ուսուցչական ամբողջ կազմի բացակայութիւնը։ Նուագում էին սազանդարներ և զուռնաներ։

Կիրակի, ամսիս 13-ին, առաւօտեան եկեղեցում պատարագից յետոյ տեղի ունեցաւ հայրապետական մաղթանք։

Ապա դպրոցում կատարեց հանդէսը. խօսեցին աւագ ուսուցիչ պ. Կ. Ամա-

